

Հայտարարություն
Հայաստանում Լաբորատորիաների ղեկավարների և
առաջնորդների համար նախատեսված գլոբալ ծրագրի (GLLP)
մենթորների և մասնակիցների մրցույթի վերաբերյալ

Հայաստանում մարտի 12-ից մեկնարկել է Լաբորատորիաների ղեկավարների և առաջնորդների համար նախատեսված գլոբալ ծրագիր (GLLP), որն իրականացվում է ԱՄՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (US-CDC) աջակցությամբ: Հայաստանում ծրագրի տեխնիկական ներդրման համար պատասխանատու գործընկերը ֆրանսիական «Լաբորատոր որակյալ ինտեգրացված ծառայություններ» (IQLS) կազմակերպությունն է:

Ծրագիրն առաջարկում է համապարփակ, ունակությունների վրա հիմնված, «Մեկ առողջապահության» մոտեցմամբ ուղղորդվող, ուսումնական ծրագիր, որը նախատեսված է բժշկական և անասնաբուժական լաբորատորիաների ղեկավարների և առաջնորդների համար: Ծրագրի նպատակն է դասընթացների միջոցով ազգային լաբորատոր համակարգերում ստեղծել, խթանել, ուժեղացնել և ապահովել կայուն զարգացման հնարավորություններ ոլորտում գործող առաջնորդների համար:

Մրցույթի տեսակը՝ Ծրագրի մենթորների և մասնակիցների ընտրություն

Ընտրության չափորոշիչները և գործընթացը՝ Ներկայացված են հավելված 1-ում՝ Ծրագրի մենթորների ընտրության չափորոշիչներ և 2-ում՝ Ծրագրի մասնակիցների ընտրության չափորոշիչներ

Մրցույթի անցկացման ամսաթվերը՝ 2020 թվականի ապրիլի 8-ից –ապրիլի 22 ժ. 17:00

Մրցույթի անցկացման վայրը՝ Երևան

Ուսուցման ծրագրի տևողությունը՝

- Մենտորների համար՝ 6 ամիս
- Մասնակիցների համար՝ 2 տարի

Մրցույթին մասնակցության համար հայտերի ներկայացման գործընթացը՝ հայտերն անհրաժեշտ է ուղարկել հետևյալ էլ-փոստի հասցեին՝

glp@ncdc.am

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով՝ ոչ ուշ քան նշված վերջնաժամկետը:

Հայտը ներառում է.

1. մանրամասն ինքնակենսագրականը (CV)
2. նպատակի մասին հայտարարությունը (ուղեկցող նամակ, որտեղ ներկայացված են տեղեկություններ իրենց ընթացիկ պաշտոնի և առաջնորդության նկատմամբ իրենց հանձնառության վերաբերյալ):

Հայտում անհրաժեշտ է հստակ նշել մենթորների, թե մասնակիցների մրցույթի համար է այն ներկայացվում:

Մասնակցության ծանուցում

Ծանուցում կստանան միայն ընտրված մենթորները և մասնակիցները՝ հայտն ուղարկելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում:

Ծրագրի մենթորների ընտրության չափորոշիչները

Մենթորությունը միջոց է ավելի փորձառու և հմուտ մասնագետի կողմից իր հմտությունները փոխանցելու ավելի քիչ փորձ և հմտություն ունեցող մասնագետին:

Հաշվի առնելով թիրախային լսարանը՝ ոլորտի պաշտոնատար անձինք, որոնք ունեն ժամանակի սղություն, նախատեսվել է կարճատև դասընթաց և արտաքին փորձագետների կողմից մենթորություն: Ձեռք բերված փորձի, գիտելիքների և հմտությունների հիման վրա նրանք իրենց հերթին կդասավանդեն և մենթորություն կիրականացնեն ծրագրի մասնակիցներին:

Հայաստանում GLLP տեղայնացման համար, մենթորների խումբը բաղկացած կլինի 7 մասնակցից, այդ թվում՝

- 3 մասնակից առողջապահական ոլորտից
- 2 մասնակից անասնաբուժական ոլորտից
- 1 մասնակից ագրարային կրթական հաստատություններից
- 1 մասնակից առողջապահական կրթական հաստատություններից

Պահանջները

Մենթորներին ներկայացվող պահանջներն են.

- Տվյալ ոլորտում ճանաչված և արհեստավարժ մասնագետ լինելը,
- Պետական սեկտորում ղեկավար պաշտոն զբաղեցնելը,
- Առնվազն տաս տարվա աշխատանքային փորձը լաբորատոր ոլորտում, որից 3-5 տարի՝ ղեկավար պաշտոնում, ինչը ենթադրում է անձնակազմի վերահսկում (ազգային մակարդակի լաբորատորիաների տնօրեն, լաբորատորիաներին վերաբերող ծրագրերի ղեկավար, լաբորատորիաների համակարգման հացերով զբաղվող ղեկավար),
- Անձնակազմի կառավարման, որոշումներ կայացնելու, պլանավորման գիտելիքները և կարողությունները,
- Համակարգչային գիտելիքները՝ աշխատանք Word, Excel, Power Point և այլ ծրագրերով,
- Առողջապահական, անասնաբուժական կամ կենսաբանական ոլորտում հետբուհական կրթության առկայությունը համարվում է առավելություն,
- Անգլերենի լավ իմացությունը համարվում է առավելություն:

Ընտրության գործընթացը

- Լաբորատորիաների ղեկավարների եւ առաջնորդների համար նախատեսված գլոբալ ծրագրի (GLLP) Տեխնիկական աշխատանքային խումբը (SLT) հրապարակում է ծրագրի մենթորների մրցույթի համար հայտերի ընդունման հայտարարություն՝ տեղադրելով այն իրենց պաշտոնական կայքերում,
- Թեկնածուները ներկայացնում են իրենց մանրամասն ինքնակենսագրականները և նպատակի մասին հայտարարությունը (ուղեկցող նամակ, որտեղ ներկայացված են տեղեկություններ իրենց ընթացիկ պաշտոնի և առաջնորդության նկատմամբ իրենց հանձնառության վերաբերյալ),
- Աշխատանքային խմբի անդամներից և տեխնիկական իրականացնող կազմակերպության ներկայացուցիչներից բաղկացած համատեղ հանձնաժողովն ուսումնասիրում է հայտերը և ընտրում մենթորներին,
- Ծանուցում կստանան միայն ընտրված մենթորները՝ հայտն ուղարկելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում:

Ծրագրի մասնակիցների ընտրության չափորոշիչները

Ծրագրի իրականացման թիրախային լսարանը կազմված է առողջապահական, անասնաբուժական, սննդի անվտանգության, և այլ մասնագիտական ոլորտների լաբորատոր մասնագետներից, որոնք ունեն լաբորատորիաներին վերաբերող ծրագրերի շրջանակներում 2-3 տարվա ղեկավարման և որոշումներ կայացնելու փորձ: Ծրագրի մասնակիցներ կարող են լինել լաբորատոր ծրագրերի ղեկավարներ, լաբորատոր հետազոտությունները վերահսկող աշխատակիցներ, լաբորատորիայի տնօրեններ, մենեջերներ և լաբորատոր հետազոտական աշխատանքներում չմասնակցող ծրագրային անձնակազմ՝ պետական տարբեր ուղղվածության լաբորատորիաներից: Ծրագիրը կոչված է աջակցելու ինչպես ընթացիկ, այնպես էլ ապագա լաբորատոր առաջնորդներին:

Հայաստանում ծրագրի տեղայնացման համար, լսարանը բաղկացած կլինի 15 մասնակցից, այդ թվում՝

- 10-ը՝ առողջապահական ոլորտից,
- 5-ը՝ անասնաբուժական և սննդի անվտանգության ոլորտից

Պահանջները

Ծրագրի մասնակիցներին ներկայացվող պահանջներն են.

- Տվյալ ոլորտում ճանաչված և արհեստավարժ մասնագետ լինելը,
- Պետական սեկտորում ղեկավար պաշտոն զբաղեցնելը,
- Առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձը լաբորատոր ոլորտում, որից 2-3 տարի՝ ղեկավար պաշտոնում, ինչը ենթադրում է անձնակազմի վերահսկում (լաբորատորիայի և/կամ բաժնի ղեկավարներ/տնօրեններ, առաջատար գիտաաշխատողներ, լաբորատոր աշխատակիցների գործունեության նկատմամբ առօրյա հսկողություն իրականացնողներ),
- Անձնակազմի կառավարման, որոշումներ կայացնելու, պլանավորման գիտելիքները և կարողությունները,
- Համակարգչային գիտելիքները՝ աշխատանք Word, Excel, Power Point և այլ ծրագրերով,
- Առողջապահական, անասնաբուժական կամ կենսաբանական ոլորտում հետբուհական կրթության առկայությունը համարվում է առավելություն,
- Անգլերենի լավ իմացությունը համարվում է առավելություն:

Ընտրության գործընթացը

- Լաբորատորիաների ղեկավարների եւ առաջնորդների համար նախատեսված գլոբալ ծրագրի (GLLP) Տեխնիկական աշխատանքային խումբը (SMT) հրապարակում է ծրագրի մասնակիցների մրցույթի համար հայտերի ընդունման հայտարարություն՝ տեղադրելով այն իրենց պաշտոնական կայքերում,
- Թեկնածուները ներկայացնում են իրենց մանրամասն ինքնակենսագրականները և նպատակի մասին հայտարարությունը (ուղեկցող նամակ, որտեղ ներկայացված են տեղեկություններ իրենց ընթացիկ պաշտոնի և առաջնորդության նկատմամբ իրենց հանձնառության վերաբերյալ),
- Աշխատանքային խմբի անդամներից և տեխնիկական իրականացնող կազմակերպության ներկայացուցիչներից բաղկացած համատեղ հանձնաժողովն ուսումնասիրում է հայտերը և ընտրում մասնակիցներին,
- Ծանուցում կստանան միայն ընտրված մասնակիցները՝ հայտն ուղարկելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում: